# ՀԱՅԱՍՏԱՆԻ
# ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔՆԵՐԸ

## *«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[**]*

***Հոդված 1.*** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ***բազային եկամուտ***՝ աշխատավարձ ու դրան հավասարեցված այլ վճարումներ, ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից «Եկամտային հարկի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ստացման ենթակա հարկվող եկամուտ (աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը).»:

***Հոդված 2.*** Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ հոդվածի 1-ին մասերը «բազային եկամուտ» բառերից հետո լրացնել «, կամ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ իրականացնում են «Հաստատագրված վճարների մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին»[*****] Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին»[******] Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության որևէ տեսակ» բառերով:

***Հոդված 3.*** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «մասնակիցների համար» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առաջին պարբերությունում նշված անձանց,» բառերով.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը պարտավոր է ամսական կատարել կուտակային վճար 5000 դրամի չափով, որը համարվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից հաշվարկված կուտակային վճարի գծով վերջնական պարտավորություն, իսկ ամսական 5000 դրամի չափով մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից:

Սույն կետի առաջին պարբերությունում չներառված անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող մասնակիցը, որի բազային եկամուտը տարեկան կտրվածքով չի գերազանցում 6 000 000 դրամը, պարտավոր է տարեկան կատարել կուտակային վճար իր բազային եկամտի 5%-ի չափով, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից.»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան***
***2 հուլիսի 2013 թ., Երևան, ՀՕ-67-Ն***

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է 2013 թվականի հունիսի 10-ին (ՀՀՊՏ N 36 (976), 10.07.13):*
[***] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[****] *ՀՀՊՏ 1998 N 15 (48), 27.07.98:*
[*****] *ՀՀՊՏ 2010 N 69 (803), 29.12.10:*
[******] *ՀՀՊՏ 2012 N 66 (940), 28.12.12:*

*«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]*

***Հոդված 1.*** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 36-րդ և 37-րդ կետերով.

«36) ***օտարերկրացի***՝ սույն օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի.

37) ***քաղաքացիություն չունեցող անձ***՝ սույն օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող՝ քաղաքացիություն չունեցող անձ:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան***
***9 հուլիսի 2013 թ., Երևան, ՀՕ-79-Ն***

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է 2013 թվականի հունիսի 20-ին (ՀՀՊՏ N 37 (977), 10.07.13):*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ*

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԻՋԻ Կրեդիտ», «Վանյա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ գրավատան կազմակերպման, և «ՀԳՀ-Արենա», «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական, «Շարք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 168Ա, 170Ա, 174Ա, 180Ա, 175Ա):
- ***«Յունիսթրիմ» և «Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Իդրամ» դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ և «ԲՏԱ բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 169Ա, 181Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Ջայնթ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 184Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական, «Ջի Ընդ էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և «ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ» փակ, «Արարատբանկ» բաց բաժնետիրական, «Պրոմեթեյ բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Արարատ», «Տաշիր» և «Կոմիտաս», «Աշտարակ», «Վանաձոր» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/539Ա, 1/654Ա, 1/567Ա, 1/604Ա, 1/639Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 գրավատների, 4 ապահովագրական փակ բաժնետիրական, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 7295000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/562Ա, 1/563Ա, 1/589Ա, 1/590Ա, 1/610Ա, 1/580Ա, 1/596Ա, 1/617Ա-1619Ա, 1/593Ա) և 5 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/587Ա, 1/591Ա, 1/592Ա, 1/611Ա, 1/629Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին*[*]

***Նպատակ ունենալով*** բարելավել բանկերի կողմից աուդիտ իրականացնող անձանց ընտրության համակարգը,

***հիմք ընդունելով*** «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը» հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի» 4-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***28 հունիսի 2013 թ., N 163-Ն***

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հունիսի 25-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.07.2013 թ. (ՀՀԳՏ N24 (468), 1.08.2013):*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** բարելավել ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման գործընթացը,

***հիմք ընդունելով*** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը հաստատելու մասին թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ի կետ 4-ի 1-ին ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***28 հունիսի 2013 թ., N 164-Ն***

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հունիսի 25-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.07.2013 թ. (ՀՀՊՏ N24 (468), 1.08.2013):*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 41-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** բարելավել ներդրումային ընկերությունների կողմից աուդիտ իրականացնող անձանց ընտրության համակարգը,

***հիմք ընդունելով*** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածը, 84-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի ««Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը հաստատելու մասին» թիվ 41-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ի 4-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***28 հունիսի 2013 թ., N 165-Ն***

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հունիսի 25-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.07.2013 թ. (ՀՀԳՏ N24 (468), 1.08.2013):*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 226-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** բարելավել հաշվետու թողարկողների կողմից աուդիտ իրականացնող անձանց ընտրության համակարգը,

***հիմք ընդունելով*** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 128-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ի հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ի 5-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***28 հունիսի 2013 թ., N 166-Ն***

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հունիսի 25-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.07.2013 թ. (ՀՅԳՏ N24 (468), 1.08.2013):*

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

***Նպատակ ունենալով*** մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող դիմումների միասնական ձևերի և դրանց ներկայացման կարգի սահմանման միջոցով ապահովել դրանց ներկայացման ընթացակարգի պարզություն, ինչպես նաև դիմումների լրացման ուղեցույցների միջոցով խուսափել դիմումներում երկիմաստ բովանդակություններից,

***հիմք ընդունելով*** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 38-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածի 2-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 2-րդ մասը, 61-րդ հոդվածի 6-րդ մասը, և

***ղեկավարվելով*** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման, կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման, կենսաթոշակի տեսակի ընտրության, մասնակցի միջոցները նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի ստացման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը»:

2. Որոշման նախաբանը «38-րդ հոդվածի 1-ին մասը,» բառերից հետո լրացնել «54-րդ հոդվածի 2-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 2-րդ մասը, 61-րդ հոդվածի 6-րդ մասը,» բառերով:

3. Որոշման 1-ին կետում ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» բառերը փոխարինել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման, կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման, կենսաթոշակի տեսակի ընտրության, մասնակցի միջոցները նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա կենսաթոշակային համակարգին միանվագ վճար կատարելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի ստացման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» բառերով:

4. Որոշմամբ հաստատված Կանոնակարգ 10/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման, կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման, կենսաթոշակի տեսակի ընտրության, մասնակցի միջոցները նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա կենսաթոշակային համակարգին միանվագ վճար կատարելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի ստացման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին»:

2) Կանոնակարգի 1-ին կետում՝ «փոխանակելու» բառից հետո լրացնել «, օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կենսաթոշակային հաշվի վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների ստացման, օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված մասնակցի ընտրության վերաբեր-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 9-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 31.07.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):*

յալ, օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնակցի միջոցներն ապահովագրական ընկերությանը փոխանցելու, օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մասնակցի միջոցները նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճարի ձևով ստանալու, օրենքի 61-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված մասնակցի միջոցներն օտարերկրյա կենսաթոշակային համակարգին միանվագ վճար կատարելու» բառերը:

3) Կանոնակարգը լրացնել Հավելված 5-ով, Հավելված 6-ով, Հավելված 7-ով, Հավելված 8-ով, Հավելված 9-ով, Հավելված 10-ով, Հավելված 11-ով, Հավելված 12-ով, Հավելված 13-ով և Հավելված 14-ով՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար հավելված 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի, հավելված 4-ի, հավելված 5-ի, հավելված 6-ի, հավելված 7-ի, հավելված 8-ի, հավելված 9-ի և հավելված 10-ի (կցվում են):

4) Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դիմումների ձևերը բաղկացած են դիմերեսից (լրացվող մաս)՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի, Հավելված 3-ի, Հավելված 5-ի, Հավելված 7-ի, Հավելված 9-ի, Հավելված 11-ի և Հավելված 13-ի, դարձերեսից (լրացման ուղեցույց)՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի, Հավելված 4-ի, Հավելված 6-ի, Հավելված 8-ի, Հավելված 10-ի, Հավելված 12-ի և Հավելված 14-ի: Դիմերեսում ներառվող տեղեկատվությունը լրացվում է դարձերեսի ուղեցույցի օգնությամբ:»:

5) Կանոնակարգը լրացնել 5.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն կանոնակարգի իմաստով՝ ազատ փոխարկելի արտարժույթներ են համարվում ԱՄՆ դոլարը, եվրոն, ճապոնական իենը, անգլիական ֆունտ ստեռլինգը, շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը և ռուսական ռուբլին:»:

6) Կանոնակարգը լրացնել 12-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Սույն կանոնակարգի Հավելված 7-ով, Հավելված 9-ով, Հավելված 11-ով և Հավելված 13-ով նախատեսված դիմումների ձևերը ներկայացվում են մասնակիցների ռեեստրը վարողին միայն հաշվի օպերատորի միջնորդությամբ:»:

7) Կանոնակարգը լրացնել ԳԼՈՒԽ 3-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

## «ԳԼՈՒԽ 3. ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Սույն կանոնակարգի Հավելված 7-ով նախատեսված դիմումը լրացնելիս դիմումին կից ներկայացվում է մասնակցի և ապահովագրական ընկերության միջև կնքված անուիտետի պայմանագրի (վկայագրի) պատճենը, եթե մասնակիցը որպես կենսաթոշակի ստացման ձև ընտրել է անուիտետը:

14. Սույն կանոնակարգի Հավելված 9-ով նախատեսված դիմումը լրացնելիս դիմումին կից ներկայացվում է ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից տրված՝ մասնակցին աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու կամ առողջական ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը:

15. Սույն կանոնակարգի Հավելված 11-ով նախատեսված դիմումը լրացնելիս դիմումին կից ներկայացվում են ՀՀ կառավարության լիազոր պետական մարմնի կողմից տրված միանվագ վճար ստանալու իրավունքը հավաստող տեղեկանքի և օտարերկրյա պետության պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարող անձի կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող այլ անձի, եթե այդ բաղադրիչը հիմնված է երաշխավորված կուտակային կենսաթոշակային պլանների («սահմանված կենսաթոշակներ» սխեմայի) վրա, ապա այդ պլանը (սխեման) գործարկող իրավասու անձի, իսկ եթե այդ բաղադրիչը հիմնված է այլ կենսաթոշակային պլանների վրա, ապա այդ պլանը գործարկող կազմակերպության կամ օտարերկրյա իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքի (որում նշվում են մասնակցի՝ օտարերկրյա պետությունում ընտրած կենսաթոշակային ֆոնդի և դրա կառավարող անձի (պլանի (սխեմայի) և գործարկող անձի) լրիվ ֆիրմային անվանումները, ինչպես նաև համապատասխան կենսաթոշակային ֆոնդի, կամ ապահովագրական ընկերության, կամ համապատասխան այլ ֆինանսական կազմակերպության այն բանկային հաշվի վավերապայմանները, որտեղ պետք է փոխանցվի միանվագ վճարը) պատճենները:

16. Սույն կանոնակարգի Հավելված 13-ով նախատեսված դիմումը լրացնելիս դիմումին կից ներկայացվում է ժառանգության վկայականի պատճենը, իսկ եթե ժառանգը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի և չունի մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացված կենսաթոշակային հաշիվ, ապա նաև ՀՀ քաղաքացի չհանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթի պատճենը:

17. Սույն կանոնակարգի 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի պատճենները ենթակա են արխիվացման հաշվի օպերատորի կողմից:

18. Հաշվի օպերատորը պարտավոր է ստուգել սույն կանոնակարգի Հավելված 7-ով, Հավելված 9-ով, Հավելված 11-ով և Հավելված 13-ով նախատեսված դիմումներում լրացված տվյալների համապատասխանությունը Հավելված 7-ով, Հավելված 9-ով, Հավելված 11-ով և Հավելված 13-ով նախատեսված դիմումներին կից ներկայացվող փաստաթղթերի տվյալներին:»:

8) Կանոնակարգի Հավելված 1-ը և Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 11-ի և Հավելված 12-ի (կցվում են):
9) Կանոնակարգի Հավելված 3-ում «1. սոցիալական քարտի համար կամ սոցիալական քարտ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» բառերը փոխարինել «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» բառերով:
10) Կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված դիմումի լրացման ուղեցույցում «1. սոցիալական քարտի համար կամ սոցիալական քարտ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» բառերը փոխարինել «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» բառերով:
11) Կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված դիմումի լրացման ուղեցույցում ««12. ստացման եղանակ» դաշտում Օրենքի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը): Ընդ որում, կենսաթոշակային հաշվի վերաբերյալ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ տեղեկատվությունն առաջին անգամ թղթային տարբերակով ուղարկվում է մասնակցին 14-ից 18-րդ կետերում նշված հասցեով կամ հասցե չնշելու դեպքում բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեով, իսկ երկրորդ և հետագա անգամները՝ սույն կետում ընտրված եղանակով, ընդ որում, մասնակցի ցանկության դեպքում տարեկան մեկ անգամից ավելի թղթային տարբերակով տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև այլ լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար մասնակցից կարող է գանձվել վճար,» բառերը փոխարինել «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),» բառերով:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ*
*12 հուլիսի 2013 թ., N 171-Ն*

*Հավելված 1*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 171-Ն որոշմամբ*

*Հավելված 5*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի*
*խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ*
*հաստատված կանոնակարգ 10/07-ի*

<table>
<tr><td colspan="8">ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ</td></tr>
<tr><td colspan="8">ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ</td></tr>
<tr><td colspan="3">1. հաճրային ծառայությունների համարանիշ կամ հաճրային ծառայու-թյունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար</td><td colspan="3">2. անուն</td><td colspan="2">3. ազգանուն</td></tr>
<tr><td colspan="3"></td><td colspan="3"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td>4. ծննդյան ամսաթիվ</td><td colspan="2">5. սեռ</td><td colspan="3">6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ</td><td colspan="2">7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="3"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td>8. քաղաքացիություն</td><td colspan="2">9. կենսական շահերի կենտրոն</td><td colspan="4">10. անհատ ձեռնարկատիրոջ պետական (հաշվառման) համար</td><td>11. ՀՎՀՀ</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="4"></td><td></td></tr>
<tr><td colspan="8">ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ</td></tr>
<tr><td colspan="4">12. ստացման եղանակ</td><td colspan="4">13. լեզու</td></tr>
<tr><td></td><td>12.1. փոստով</td><td></td><td>12.2. էլեկտրոնային փոստով</td><td></td><td>13.1. հայերեն</td><td></td><td>13.2. ռուսերեն</td><td></td><td>13.3. անգլերեն</td></tr>
<tr><td colspan="8">ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ</td></tr>
<tr><td>14. փոստային ինդեքս</td><td>15. երկիր</td><td>16. վարչատա-րածքային միավոր</td><td colspan="2">17. համայնք (վարչական շրջան)</td><td colspan="3">18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="2"></td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="3">19. հեռախոսի համար</td><td colspan="2">20. բջջային հեռախոսի համար</td><td colspan="3">21. էլեկտրոնային փոստի հասցե</td></tr>
<tr><td colspan="3"></td><td colspan="2"></td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="8">*Խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկատվություն իմ կենսաթոշակային հաշվում առկա պարտադիր կենսաթոշակային ֆոնդի (ֆոնդերի) փայերի, դրանց ընդհանուր հաշվարկային արժեքի, ինչպես նաև իմ միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ձևավորվող ամսական գումարի մասին:*</td></tr>
<tr><td>22. ամսաթիվ</td><td colspan="2">23. մասնակցի ստորագրություն</td><td colspan="2">24. լիազորված անձի անուն, ազգանուն</td><td colspan="3">25. լիազորված անձի ստորագրություն</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="2"></td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="8">**Էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից**</td></tr>
</table>

*Հավելված 2*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 171-Ն որոշմամբ*

*Հավելված 6*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի*
*խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ*
*հաստատված կանոնակարգ 10/07-ի*

**Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման դիմումի լրացման ուղեցույց**

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
10. «10. անհատ ձեռնարկատիրոջ պետական (հաշվառման) համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի պետական հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),

13. «13. լեզու» դաշտում ձախից V-աձև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն. ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունն ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «22. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը, (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
23. «23. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
24. «24. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
25. «25. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

*Հավելված 3*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 171-Ն որոշմամբ*

*Հավելված 7*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի*
*խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ*
*հաստատված կանոնակարգ 10/07-ի*

| ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՏԵՍԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ | | | |
|---|---|---|---|
| ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | | | |
| 1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար | | 2. անուն | 3. ազգանուն |
| 4. ծննդյան ամսաթիվ | 5. սեռ | 6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ | 7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար |
| 8. քաղաքացիություն | 9. կենսական շահերի կենտրոն | 10. անհատ ձեռնարկատիրոջ պետական (հաշվառման) համար | 11. ՀՎՀՀ |
| ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ | | | |
| 12. ստացման եղանակ | | 13. լեզու | |
| ☐ 12.1. փոստով | ☐ 12.2. էլեկտրոնային փոստով | ☐ 13.1. հայերեն | ☐ 13.2. ռուսերեն ☐ 13.3. անգլերեն |
| ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ | | | |
| 14. փոստային հնդեքս | 15. երկիր | 16. վարչատարածքային միավոր | 17. համայնք (վարչական շրջան) |
| 18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան | | | |
| 19. հեռախոսի համար | | 20. բջջային հեռախոսի համար | 21. էլեկտրոնային փոստի հասցե |
| ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՍՏԱՑՄԱՆ ՁԵՎԸ | | | |
| *ամսական վճար < … դրամ (0.75 հիմնական կենսաթոշակ)* | | | |
| 22. կենսաթոշակի ստացման ձևը (կարելի է ընտրել միայն մեկ ձև) | | | |
| 22.1. անուիտետ | ☐ | | |
| 22.2. ծրագրային վճար | ☐ | | |
| 22.3. միանվագ վճար | ☐ | | |
| 23. կենսաթոշակի ստացման ձևը (կարելի է ընտրել միաժամանակ մի քանի ձև) | | | |
| 23.1. անուիտետ (տոկոս) | ☐ | | |
| 23.2. ծրագրային վճար (տոկոս) | ☐ | | |
| 23.3. միանվագ վճար (տոկոս) | ☐ | | |
| *… դրամ (0.75 հիմնական կենսաթոշակ) < ամսական վճար < … դրամ (5 հիմնական կենսաթոշակ)* | | | |
| 24. անուիտետ | | | |
| 24.1. ամբողջությամբ | ☐ | | |
| *ամսական վճար > … դրամ (5 հիմնական կենսաթոշակ)* | | | |
| 25. անուիտետ | | | |
| 25.1. ամբողջությամբ | ☐ | | |
| 25.2. … դրամի (5 հիմնական կենսաթոշակ) չափով | ☐ | | |
| 25.3. այլ չափով | ☐ | 25.4. չափը (դրամ) | ☐ |
| 26. ծրագրային վճար | | | |
| 26.1. ամբողջ մնացորդի չափով | ☐ | | |
| 26.2. այլ չափով (մնացորդից) | ☐ | 26.3. չափը (տոկոս) | ☐ |
| 27. միանվագ վճար | | | |
| 27.1. ամբողջ մնացորդի չափով | ☐ | | |
| 27.2. այլ չափով (մնացորդից) | ☐ | 27.3. չափը (տոկոս) | ☐ |
| 28. ապահովագրական ընկերության անվանումը | | 29. անուիտետի պայմանագրի համարը | |
| | | | |
| 30. բանկային հաշվի համարը | | 31. բանկի անվանումը | |
| | | | |
| 32. ամսաթիվ | 33. մասնակցի ստորագրություն | 34. լիազորված անձի անուն, ազգանուն | 35. լիազորված անձի ստորագրություն |
| | | | |
| **Էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից** | | | |

*Հավելված 4*

*Հաստատված է*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի*
*2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 171-Ն որոշմամբ*

*Հավելված 8*
*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի*
*խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ*
*հաստատված կանոնակարգ 10/07-ի*

## Կենսաթոշակի տեսակի ընտրության դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
10. «10. անհատ ձեռնարկատիրոջ պետական (հաշվառման) համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի պետական հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),

13. «13. լեզու» դաշտում ձախից V-աձև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունն ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. 2-23 դաշտերը պետք է լրացվեն միայն այն մասնակիցների (դիմումատուների) կողմից, ում կենսաթոշակային հաշվում առկա միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է … դրամից (հիմնական կենսաթոշակի 75 տոկոս): «22. կենսաթոշակի ստացման ձևը (կարելի է ընտրել միայն մեկ ձև)» դաշտում V-աձև նշումով ընտրություն է կատարվում կենսաթոշակի ստացման ձևերից որևիցե մեկի օգտին, ընդ որում՝ «22.1. անուիտետ», «22.2. ծրագրային վճար» և «22.3. միանվագ վճար» տարբերակներից միայն մեկը կարելի է ընտրել: Եթե մասնակիցը ցանկանում է ստանալ իր կենսաթոշակը միաժամանակ մի քանի ձևով, ապա «23. կենսաթոշակի ստացման ձևը (կարելի է ընտրել միաժամանակ մի քանի ձև)» դաշտի «23.1. անուիտետ (տոկոսներով)», «23.2. ծրագրային վճար (տոկոսներով)» և «23.3. միանվագ վճար (տոկոսներով)» վանդակներում պետք է լրացնի տոկոսներն այն համամասնությամբ, ինչպես որ ուզում է ստանալ իր կենսաթոշակը: Եթե մասնակիցը ցանկանում է ստանալ իր կենսաթոշակը երեք հնարավոր ձևերից միայն երկուսով, ապա երրորդ ձևի համար այն պետք է լրացնի «0»: «23.1. անուիտետ (տոկոսներով)», «23.2. ծրագրային վճար (տոկոսներով)» և «23.3. միանվագ վճար (տոկոսներով)» վանդակներում նշված տոկոսների հանրագումարը պետք է հավասար լինի 100-ի: «24. անուիտետ» դաշտը պետք է լրացվի միայն այն մասնակիցների (դիմումատուների) կողմից, ում կենսաթոշակային հաշվում առկա միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից (… դրամ), սակայն փոքր է հիմնական կենսաթոշակի հնգապատիկից (… դրամ): V-աձև նշումով ընտրություն պետք է կատարվի «24.1. ամբողջությամբ» վանդակում: 25-27 դաշտերը պետք է լրացվեն միայն այն մասնակիցների (դիմումատուների) կողմից, ում կենսաթոշակային հաշվում առկա միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է … դրամից (հիմնական կենսաթոշակի հնգապատիկ): V-աձև նշումով ընտրություն է կատարվում 25.1-27.2 տարբերակներից մեկի կամ միաժամանակ մի քանիսի օգտին: Եթե մասնակիցը ցանկանում է ստանալ իր կենսաթոշակը միայն անուիտետի տեսքով, ապա պետք է ընտրի «25.1. ամբողջությամբ» տարբերակը: Եթե օրենքի համաձայն մասնակիցը պարտավորված է … դրամին (հինգ հիմնական կենսաթոշակ) հավասար մասով ստանալ իր կենսաթոշակն անուիտետի տեսքով, ապա պետք է ընտրի «25.2. հիմնական կենսաթոշակի հնգապատիկի չափով» տարբերակը: Եթե մասնակիցը ցանկանում է ստանալ իր կենսաթոշակի մի մասը (հիմնական կենսաթոշակի հնգապատիկը (… դրամ) գերազանցող մասով) անուիտետի ձևով, ապա պետք է ընտրի «25.3. այլ չափով» տարբերակը: «25.3. այլ չափով» տարբերակն ընտրելու դեպքում «25.4. չափը (դրամով)» վանդա-

կում պետք է նշվի գումարի չափը՝ ՀՀ դրամով, որը մասնակիցը ցանկանում է ստանալ որպես կենսաթոշակ անուիտետի ձևով: Եթե դիմումատուն ընտրել է «25.2. … դրամի (հիմնական կենսաթոշակի հնգապատիկ) չափով» կամ «25.3. այլ չափով» տարբերակներից որևէ մեկը և ցանկանում է իր կենսաթոշակի մնացած մասն ամբողջությամբ ստանալ ծրագրային վճարի տեսքով, ապա պետք է V-աձև նշումով ընտրի «26.1. ամբողջ մնացորդի չափով» տարբերակը: Եթե դիմումատուն ընտրել է «25.2. … դրամի (հիմնական կենսաթոշակի հնգապատիկ) չափով» կամ «25.3. այլ չափով» տարբերակներից որևէ մեկը և ցանկանում է իր կենսաթոշակի մնացած մասը ստանալ ծրագրային վճարի և միանվագ վճարի ձևով, ապա պետք է V-աձև նշումով ընտրի «26.2. այլ չափով (մնացորդից)» և «27.2. այլ չափով (մնացորդից)» տարբերակները, ընդ որում՝ «26.3. չափը (տոկոսներով)» և «27.3. չափը (տոկոս)» վանդակներում պարտադիր պետք է լրացվեն համապատասխան տոկոսները: Եթե դիմումատուն ընտրել է «25.2. … դրամի (հիմնական կենսաթոշակի հնգապատիկ) չափով» կամ «25.3. այլ չափով» տարբերակներից որևէ մեկը և ցանկանում է իր կենսաթոշակի մնացած մասն ամբողջությամբ ստանալ միանվագ վճարի տեսքով, ապա պետք է V-աձև նշումով ընտրի «27.1. ամբողջ մնացորդի չափով» տարբերակը:

23. «28. ապահովագրական ընկերության անվանումը» վանդակում, եթե ընտրվել է «22.1. անուիտետ» տարբերակը, պարտադիր լրացվում է այն ապահովագրական ընկերության լրիվ ֆիրմային անվանումը, ում հետ մասնակիցը կնքել է անուիտետի պայմանագիր,
24. «29. անուիտետի պայմանագրի համարը» վանդակում, եթե ընտրվել է «22.1 անուիտետ» տարբերակը, պարտադիր լրացվում է «23. ապահովագրական ընկերության անվանումը» վանդակում նշված ապահովագրական ընկերության և մասնակցի միջև կնքված անուիտետի պայմանագրի (վկայագրի) հերթական համարը,
25. «30. բանկային հաշվի համարը» վանդակում, եթե մասնակիցը ցանկանում է իր կենսաթոշակը կամ կենսաթոշակի մի մասը ստանալ միանվագ կամ ծրագրային վճարի տեսքով, պարտադիր լրացվում է ՀՀ տարածքում գործող բանկում գտնվող մասնակցի բանկային հաշվի համարը, որին մասնակիցը ցանկանում է, որ մասնակիցների ռեեստրը վարողը փոխանցի իր կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում առաջացած դրամական միջոցները, ծրագրային կամ միանվագ վճարի տեսքով,
26. «31. բանկի անվանումը» վանդակում, եթե մասնակիցը ցանկանում է իր կենսաթոշակը կամ կենսաթոշակի մի մասը ստանալ միանվագ կամ ծրագրային վճարի տեսքով, պարտադիր լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ գտնվում է «30. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարը,
27. «32. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը, (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
28. «33. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
